# Ֆինանսական միջնորդների շրջանակ (FIF) – ԱԿԲԱ բանկ ՄՓՄՁ վարկ

**Երկիր**:
ՀԱՅԱՍՏԱՆ

**Ծրագրի համարը:**
53933

**Բիզնես ոլորտ:**
Ֆինանսական հաստատություններ

**Պետական/մասնավոր**
ՄԱՍՆԱՎՈՐ

**Բնապահպանական կատեգորիա:**
ՖՀ

**Հաստատման ամսաթիվը:**
23-ը օգոստոսի 2022

**Կարգավիճակը:**
Գտնվում է տրամադրման փուլում

**Ծրագրի ամփոփ փաստաթղթի հրապարակման ամսաթիվը:**
31-ը օգոստոսի 2022

*Առաջնորդվելով Տեղեկատվության հասանելիության մասին հրահանգի 1.4.2 (iii) բաժնով՝ «Բանկի ղեկավարության կողմից հաստատված այն ծրագրերը, որոնց հաստատման լիազորությունը պատվիրակել է Տնօրենների խորհուրդը, Ծրագրի ամփոփ փաստաթուղթը պետք է հրապարակվի «առարկություններ չկան» համապատասխան ծանուցման ժամկետի սկզբում Բանկի անդամ հանդիսացող երկրին՝ համաձայն ՎԶԵԲ-ի ստեղծման Համաձայնագրի 13-րդ հոդվածի (iii)-ի»:*

## Ծրագրի նկարագրություն

Տեղական մասնավոր միկրո, փոքր և միջին ձեռնարկությունների (ՄՓՄՁ) ֆինանսավորման համար Ակբա բանկին մինչև 14 մլն ԱՄՆ դոլարի չափով առանց գրավի առաջնային վարկի տրամադրում:

## Ծրագրի նպատակները

Ծրագիրը կաջակցի ԱԿԲԱ բանկին՝ ընդլայնելու տեղական ՓՄՁ ոլորտի վարկավորումը: Վարկը ԱԿԲԱ բանկին հնարավորություն կտա մեծացնել հասանելիությունը և բավարարել ՓՄՁ-ների կողմից տեղական արժույթով ավելի երկարաժամկետ ֆինանսավորման չբավարարված պահանջարկը:

## Ազդեցությունն անցումային շրջանի վրա

Վաղ անցումային շրջանի վրա ազդեցության ցուցանիշը: 60

**Մրցակցային-** Ծրագրի աջակցությամբ ԱԿԲԱ բանկը վարկավորում է Հայաստանում ֆինանսավորման կարիք ունեցող մասնավոր ՓՄՁ-ներին՝ բազմապատկելով ՎԶԵԲ -ի կողմից տրամադրված ֆինանսավորումը որոշակի գործակցով: Ծրագիրը կենտրոնանում է տարածաշրջանային իրազեկման և ՓՄՁ նոր հաճախորդների ներգրավման վրա:

**Ճկուն-** Ֆինանսական համաձայնագրերին և պորտֆելի որակի գործակիցներին համապատասխանելու պահանջները կնպաստեն հաստատության ճկունությանը:

## Հաճախորդը

ԱԿԲԱ ԲԱՆԿ ԲԲԸ

ԱԿԲԱ բանկը Հայաստանի առաջատար բանկերից մեկն է և ՎԶԵԲ-ի երկարաժամկետ գործընկերը 2003թ. առաջին ներգրավվածությունից ի վեր: Այն Հայաստանում 4-րդ խոշորագույն բանկն է ընդհանուր ակտիվների առումով և գերիշխող դիրք ունի գյուղատնտեսության և մասնավորապես գյուղական բնակավայրերի ՄՓՄՁ-ների վարկավորման ոլորտում:

Բանկի բաժնետերերն են.

- *ACBA Federation* ՓԲԸ ՝83.80%;- շահույթ չհետապնդող կազմակերպություն, որը համախմբում է Հայաստանում 10 ԳՓՄՄ-ներ (Գյուղացիական Փոխօգնության Մարզային Միավորումներ)
- Credit Agricole S.A-ի դուստր ձեռնարկություն Sacam International՝ 4.55%;
- Ավելի քան 5000 բաժնետեր, այդ թվում իրավաբանական և ֆիզիկական անձինք՝ 11,65% (բաժնեմասերը ներկայացված են Հայաստանի արժեթղթերի բորսայում):

## ՎԶԵԲ-ի կողմից տրամադրվող ֆինանսավորում

14,000,000.00 ԱՄՆ դոլար

## Ծրագրի ընդհանուր արժեքը

14,000,000.00 ԱՄՆ դոլար

## Հավելյալություն

**Ֆինանսավորման կառուցվածքը-** ՎԶԵԲ-ն առաջարկում է շուկայում առկա միջինից ավելի երկար արտոնյալ ժամանակահատվածով ֆինանսավորում, ինչն անհրաժեշտ է ծրագիրը կառուցելու համար:

**Ստանդարտների սահմանում-** Ծրագիրը կօգտվի ՎԶԵԲ-ի՝ ավելի բարձր ֆինանսական չափանիշների, այդ թվում ֆինանսական համաձայնագրերի կիրառման փորձից:

## Բնապահպանական եվ սոցիալական ազդեցության ամփոփ նկարագիր

Դասվել է ՖՀ (FI) կատեգորիայի (Բնապահպանական և սոցիալական քաղաքականություն –ԲՍՔ 2019): ԱԿԲԱ բանկը ՎԶԵԲ-ի երկարամյա գործընկերն է և նրա կատարողականն անցյալում և գործող վարկերի գծով մինչ օրս ներկայացրած տարեկան բնապահպանական և սոցիալական (ԲևՍ) հաշվետվությունները գնահատվել են բավարար: Կպահանջվի, որ ԱԿԲԱ բանկը շարունակի համապատասխանել Գործունեության 2-րդ, 4-րդ և 9-րդ պահանջներին և ՎԶԵԲ-ի կորպորատիվ, ՓՄՁ և միկրո վարկերի բնապահպանական և սոցիալական ընթացակարգերին, ինչպես նաև Առևտրի խթանման ծրագրի (TFP) բնապահպանական և սոցիալական ընթացակարգերին, հետևել ՎԶԵԲ-ի թարմացված բնապահպանական և սոցիալական բացառման ցանկին, ինչպես նաև ԲՍՔ 2019 փաստաթղթում ներկայացված ցանկին և բանկին ներկայացնի բնապահպանական և սոցիալական տարեկան զեկույցներ:

ԱԿԲԱ բանկի վարկառուներից կպահանջվի համապատասխանել ազգային բնապահպանական, առողջության, անվտանգության և աշխատանքային կիրառելի պահանջներին: ՎԶԵԲ-ի միջոցներով ֆինանսավորվող արևային ենթածրագրերը պետք է կառավարվեն համաձայն «Արևային մատակարարման շղթայի ռիսկերի կառավարման մոտեցման» (CS/FO/21-35), (CS/FO/): 21-35 Լրացում 2) և այդ մոտեցման ներքո մշակված ուղեցույցներով:

## Տեխնիկական համագործակցություն եվ դրամաշնորհային ֆինանսավորում

ՎԶԵԲ-ը կտրամադրի հատուկ մշակված Տեխնիկական համագործակցության ծրագիր՝ ուղղված ԱԿԲԱ բանկում կորպորատիվ վարկավորման ընթացակարգերի ամրապնդմանը: Դոնորային ֆինանսավորման ակնկալվող աղբյուրը ՎԶԵԲ բաժնետերերի հատուկ հիմնադրամն է: ԱԿԲԱ բանկը կապահովի հաճախորդի կողմից ներդրումը կանխիկ գումարի տեսքով, որը համարժեք կլինի ՏՀ ընդհանուր գումարի 20%-ին:

ՓՄՁ տեղական արժույթի ծրագրի շրջանակներում վարկը կօգտվի նաև առաջին կորստի ապահովագրական ռիսկի ծածկույթից 12,5%-ի չափով:

**Ընկերության կոնտակտային տվյալները**

Անժելիկա Բաղրամյան
Anzhelika.Baghramyan@acba.am
+ 374 10 31 8888
www.acba.am
Հայաստանի Հանրապետություն, Երևան 0002, Արամի փող. 82-84

# Անցումային շրջանի ընկալումը

Այստեղ կարող եք լրացուցիչ տեղեկություններ գտնել առ այն, թե ինչ մոտեցումներ է կիրառում ՎԶԵԲ-ը անցումային շրջանում առաջընթացի վրա ազդեցությունը չափելու համար:

# Բիզնես հնարավորություններ

Բիզնես հնարավորությունների կամ գնումների համար դիմե՛ք հաճախորդի ընկերությանը:

ՎԶԵԲ-ի հետ կապված (գնումներին չառնչվող) բիզնես հնարավորությունների համար դիմե՛ք.

Հեռ.՝ +44 20 7338 7168
Էլ-փոստ՝ projectenquiries@ebrd.com

Պետական ոլորտում ծրագրերի համար այցելե՛ք ՎԶԵԲ-ի գնումներ:

Հեռ.՝ +44 20 7338 6794
Էլ-փոստ՝ procurement@ebrd.com

# Ընդհանուր հարցումներ

Կարող եք անել կոնկրետ հարցումներ՝ օգտագործելով ՎԶԵԲ-ի հարցումների ձևաթուղթը:

# Բնապահպանական և սոցիալական քաղաքականություն (ԲՍՔ)

ԲՍՔ-ն և դրա հետ կապված՝ Գործունեության նկատմամբ պահանջները (ԳՊ-ներ) սահմանում է այն ուղիները, որոնց միջոցով ՎԶԵԲ-ն իրականացնում է իր հանձնառությունը՝ խթանել «էկոլոգիապես առողջ և կայուն զարգացումը»: ԲՍՔ-ն և ԳՊ-ները պարունակում են հատուկ դրույթներ, ըստ որոնց հաճախորդները պետք է համապատասխանեն տեղեկությունների հրապարակայնացման և խորհրդատվության մասին ազգային օրենքների կիրառվող պահանջներին, ինչպես նաև ստեղծեն բողոքարկման մեխանիզմ՝ շահագրգիռ կողմերի մտահոգությունները և բողոքները ստանալու և լուծումները դյուրացնելու նպատակով, մասնավորապես, հաճախորդի և ծրագրի կողմից

բնապահպանական և սոցիալական ասպեկտների կատարողականի վերաբերյալ: Կախված ծրագրի բնապահպանական և սոցիալական ռիսկերի և ազդեցությունների բնույթից և մասշտաբից, ՎԶԵԲ-ը լրացուցիչ պահանջում է, որ իր հաճախորդները, անհրաժեշտության դեպքում, տեղեկություն հրապարակեն ծրագրից բխող ռիսկերի և ազդեցությունների մասին կամ բովանդակալից խորհրդակցություններ անցկացնեն շահագրգիռ կողմերի հետ, դիտարկեն նրանց կարծիքներն ու արձագանքեն դրանց:

Այս կապակցությամբ ՎԶԵԲ-ի գործելակերպի վերաբերյալ ավելի մանրամասն տեղեկությունները ներկայացված են ԲՍՔ-ում:

## Բարեվարքություն և համապատասխանություն

ՎԶԵԲ-ի՝ Համապատասխանության վերահսկման գլխավոր տնօրենի գրասենյակը (ՀՎԳՏԳ) խթանում է լավ կառավարումը և ապահովում բարեվարքության բարձրագույն չափանիշների կիրառումը Բանկի գործունեության բոլոր ասպեկտներում՝ միջազգային լավագույն փորձի համաձայն: Բանկի բոլոր հաճախորդների վերաբերյալ իրականացվում է բարեվարքության պահանջներին համապատասխանության ստուգում-ուսումնասիրություն՝ համոզվելու, որ ծրագրերը չեն պարունակում Բանկի համար անընդունելի ռիսկեր բարեվարքության կամ հեղինակության առումով: Բանկի համոզմամբ, ծրագրի գնահատման և հաստատման փուլերում խնդիրների հայտնաբերումն ու լուծումը Բանկի գործարքների բարեվարքության ապահովման ամենաարդյունավետ միջոցներն են: ՀՎԳՏԳ-ն առանցքային դեր է կատարում պաշտպանիչ այս գործողություններում, ինչպես նաև օգնում է վերահսկել բարեվարքությանն առնչվող ռիսկերը ծրագրերի հետներդրումային փուլերում:

ՀՎԳՏԳ-ն նաև պատասխանատու է ՎԶԵԲ-ի կողմից ֆինանսավորվող ծրագրերում կեղծիքի, կոռուպցիայի և չարաշահման կապակցությամբ մեղադրանքների հետաքննության համար: Ցանկացած անձ, ինչպես Բանկի ներսում, այնպես էլ նրանից դուրս, ով կասկածներ ունի, որ առկա են կեղծիքի կամ կոռուպցիայի դեպքեր, պետք է գրավոր զեկույց ներկայացնի Համապատասխանության վերահսկման գլխավոր տնօրենին էլ-փոստով՝ compliance@ebrd.com: Խնդիրների մասին բոլոր զեկույցները կքննվեն ՀՎԳՏԳ-ի կողմից՝ հետագա քայլերը որոշելու նպատակով: Քննվելու են բոլոր զեկույցները, այդ թվում՝ անանուն զեկույցները: Զեկույցները կարող եք ներկայացնել Բանկի կամ Բանկի գործունեության ցանկացած երկրի լեզվով: Տեղեկությունը տրամադրելիս անհրաժեշտ է դրսևորել բարեխիղճ մոտեցում:

## Տեղեկությունների հասանելիության քաղաքականություն (ՏՀՔ)

ՏՀՔ-ն սահմանում է, թե ինչպես է ՎԶԵԲ-ը հրապարակայնացնում տեղեկությունները և խորհրդակցում շահագրգիռ կողմերի հետ, որպեսզի 2020թ. հունվարի 1-ից ուժի մեջ մտնելուց հետո նպաստի ՏՀՔ-ի ռազմավարությունների, քաղաքականությունների և գործառնությունների մասին ավելի լավ իրազեկմանն ու ընկալմանը: Խնդրում ենք այցելել Տեղեկությունների հասանելիության քաղաքականության կայքէջը՝ պարզելու, թե ինչ տեղեկություն կա ՎԶԵԲ-ի կայքում:

Տեղեկություններ ստանալու համար կարող եք կոնկրետ հարցումներ ներկայացնել՝ օգտագործելով ՎԶԵԲ-ի հարցումների ձևաթուղթը:

## Ծրագրերի հաշվետվողականության անկախ մեխանիզմ (ԾՀԱՄ)

Եթե Հաճախորդի կամ Բանկի հետ բնապահպանական և սոցիալական ասպեկտների կամ հրապարակայնացման հետ կապված խնդիրների լուծմանն ուղղված ջանքերն (օրինակ, Հաճախորդի՝ Ծրագրի մակարդակով բողոքարկման

մեխանիզմի կամ Բանկի ղեկավարության հետ անմիջական ներգրավման միջոցով) ապարդյուն են, ապա անհատներն և կազմակերպությունները կարող են դիմել ՎԶԵԲ-ի՝ Ծրագրերի հաշվետվողականության անկախ մեխանիզմին (ԾՀԱՄ)՝ իրենց մտահոգող խնդիրների լուծումը ստանալու համար:

ԾՀԱՄ-ն անկախ եղանակով քննում է Ծրագրի հետ կապված խնդիրները, որոնք, ենթադրաբար, վնաս են պատճառել (կամ, հավանաբար, կարող են վնաս պատճառել): Մեխանիզմի նպատակն է. աջակցել Ծրագրի շահագրգիռ կողմերի միջև երկխոսությանը՝ շրջակա միջավայրի, սոցիալական ասպեկտների և իրապարակայնացման հետ կապված խնդիրները լուծելու նպատակով, պարզել, արդյոք Բանկը համապատասխանել է իր իսկ Բնապահպանական և սոցիալական քաղաքականությանը կամ իր՝ Տեղեկությունների հասանելիության քաղաքականության՝ Ծրագրին վերաբերող կոնկրետ դրույթներին, և, անհրաժեշտության դեպքում, վերացնել այդ քաղաքականություններին վերաբերող ցանկացած անհամապատասխանություն՝ միաժամանակ կանխելով Բանկի անհամապատասխանության դեպքերն ապագայում:

Խնդրում ենք այցելել Ծրագրերի հաշվետվողականության անկախ մեխանիզմի կայքէջը ՝իմանալու ավելին ԾՀԱՄ-ի և նրա լիազորությունների մասին, ինչպես Դիմում ներկայացնել ստուգում անցկացնելու համար, կամ կապ հաստատել ԾՀԱՄ-ի հետ էլ-փոստով ipam@ebrd.com ՝ԾՀԱՄ-ի և դիմում ներկայացնելու վերաբերյալ ուղղորդում և լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար: